



Ողորմութեամբն Ամենակալ Աստուծոյ ողջամբ եւ առողջութեամբ բոլորեցինք 1963 տարին յաջողութեամբ:

Սոյն տարին հանդիսացաւ այս համայնքին մեր մատուցած ծառայութեան տասնը երկրորդ տարեշրջանը: Այս տարեշրջանը եւս եղաւ մեզի համար արդիւնաւէտ աշխատանքի հանգրուան մը, հետզհետէ աճող մեր այս հոգեւոր տան կեանքին մէջ:

Տարուան մը գործունէութիւնը ամփոփ կերպով կը պատկերացնենք ստորեւ զանազան գլխակարգութեանց ներքեւ յստակացնելու համար զայն.-

Ա.- ԿՐՕՆԱԿԱՆ.- Տարուան բոլոր կիրակիներուն կանոնաւոր կերպով պատարագած եւ Բանին Կենաց քարոզած ենք, ցոյց տալով Ս. Աւետարանի ճշմարիտ ուղին, լուսաւոր առաջնորդութիւնը եւ բարոյական դասերը: Երբեմն քարոզած ենք նաեւ անգլերէն լեզուով:

Բ.- ՄԿՐՏՈՒԹԻՒՆԹ.- Տարուան ընթացքին կատարած ենք 45 մկրտութիւններ: Բժախնդիր եղած ենք որ կնքահայրները ըլլան միշտ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ, պահելու համար մեր եկեղեցւոյ օրէնքները եւ աւանդութիւնները, ինչպէս նաեւ պահանջած ենք որ փոքրիկները ունենան անպայման հայկական անուն մը: Բոլոր մկրտուածներու արձանագրութիւնները նոյնհետայն անցուցած ենք մեր տոմարին մէջ: Նմանապէս իւրաքանչիւրին ղրկած ենք մկրտութեան վկայական, կցելով Ս. Եկեղեցւոյն գունաւոր նկարներէն հատ մը, որպէս զի փոքրիկը հետագային ուր ալ գտնուի գիտակցի թէ ինք այս փառակերտ եկեղեցւոյն մէջ մկրտուած է:

Գ.- ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԹ.- Տարուան ընթացքին օրհնած ենք 28 պսակներ, որոնց արձանագրութիւնը եւս կանոնաւոր կերպով պահած ենք մեր տոմարին մէջ: Իւրաքանչիւրին ղրկած ենք իր վկայագիրը, նոյնպէս կցելով եկեղեցւոյ նկարէն, որպէս յիշատակ: Պսակուելիք զոյգերը նախապէս հրաւիրած ենք մեր գրասենեակը եւ ամուսնական կեանքը սիրով, իրարհասկացողութեամբ եւ երջանկութեամբ ապրելու համար տուած ենք հայրական խորտներ եւ հովուական պատգամներ: Ամուսնացող այս 28 զոյգերու 15-ը եղած է խառն: Այս պատճառաւ հարկադրուած ենք յաճախ աղօթքները կարդալ անգլերէն լեզուով:

Դ.- ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ.- Տարուան ընթացքին կատարած ենք 65 թաղմանական արողութիւն: Ասոնց 31-ը մեռած են սրտի տառնապէ կամ հիւանդութենէ, 13-ը քէնսըրէ, 6-ը ծերութենէ եւ մնացածը այլազան հիւանդութիւններէ: Բոլոր թաղումներուն խօսած ենք դամբանական եւ մխիթարական խօսքեր: Մահագոյժը ստանալուն ընդհանրապէս այցելած ենք մեռնողին բնակարանը ընտանիքը մխիթարելու համար: Առանց բացառութեան այցելած ենք մեռելատուն հոգաբարձութեան ներկայացուցիչներուն հետ եւ աղօթած ենք: Թաղումէն յետոյ այցելած ենք ընտանիքին: Իսկ քառասունքի ընթացքին եւս անպայման ցաւակցական ու մխիթարական այցելութիւն մը տուած ենք: Այս այցելութեան ընթացքին հետերնիս առած ենք փոխան ծաղկեպսակի ցանկը, եթէ հանգանակութիւն եղած է, եւ ընտանիքին կարգացած ենք եւ սրբազրութիւններ կատարած, եւ քատ անգամ ալ հարկադրուած ենք բոլորովին նորը գրել: Յաճախ ընտանիքին օգնած ենք քառասունքի եւ շնորհակալիքի ծանուցագիրները պատրաստելով եւ մամուլին ղրկելով:

Ե.- ԳՐԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԹ.- Ջանացած ենք օրուան առաջին մասը, կէսօրէ առաջ, մեր գրասենեակը գտնուիլ եւ գրել մեր միջոցաւ ըլլալիք նամակագրութիւնները, կանոնաւոր ընթացքի մը մէջ պահելու համար մեր դիւանական գործերը: Նամակատան միջոցաւ գրասենեակ հասած բոլոր դրամական առաքումները կանոնաւոր կերպով ցանկի առած ենք օրը օրին եւ կիրակի առտունները զանոնք փոխանցած ենք

Հոգաբարձու թեան, իրենց գործը փոքր ինչ դիւրացնելով: Հոս կատարած եւ կատարել տուած ենք բոլոր ծանուցումները եւ բազմագրուելիք շրջաբերականները: Զանազան ենք գոհացում տալ հեռաձայնային բոլոր խնդրանքներու: Եւ պէտք է գիտնալ թէ մեր հեռախօսը օրն ի բուճ կը գործէ, կանոնաւոր առեւտրական գրասենեակի մը նման:

Զ.- ՏԱՃԱՐ.- Ամսէ ամիս կանոնաւոր կերպով հրատարակած ենք Տաճար ամսա- թերթիկը հայերէն եւ անգլերէն լեզուներով, որ Ս. Եկեղեցւոյս եւ անոր ենթա- մարմիններու գործունէութեան արձագանգը կը տանի շուրջ 2500 հայ տուններու: Տաճարը լաւ ընդունելութիւն գտած է մեր ծխականներու կողմէ, որ զայն ամսէ ամիս նամակի մը հետաքրքրութեամբ կը կարդան: Թերթիկին նիւթական մասը կը ծան- րանայ Միական Խորհուրդի գանձին վրայ: Դժբախտաբար ամէն ընթացող չի կատարել անոր հանդէպ իր նիւթական պարտականութիւնը, զայն անկախ եւ ինքնաբաւ դարձնելու համար, որպէս զի ծաւալը գէթ քիչ մը մեծնայ, կամ կրկնապատկուի աւելի լայն եւ առատ տեղեկութիւններ եւ այլ գրութիւններ պարունակելու համար:

Է.- ԱԻՅՏԱՐԱՆԻ ՅՈՂԲԵՐ.- Այս խորագրին ներքեւ տարուան սկիզբները կրօ- նաբարոյական սիւնակ մը բացինք ՊԱՅԲԱՐ օրաթերթի շաբաթօրեայ թիւին մէջ, պա- տուարժան խմբագրութեան բարեացակամութենէն օգտուելով, ժողովրդային աւելի լայն խաւերուն հասցնելու համար կեանքի յոռի եւ առաւել կողմերու շուրջ մեր սնուցած գաղափարները եւ կրօնական մտածումներն ու զգացումները: Մեզի համար մեծ ուրախութիւն է յայտնել Հոս թէ ասիկա այնպիսի գրկաբաց ընդունելութեան մը արժանացաւ որ թերթին խմբագրութիւնը Ամերիկայի այլազան կողմերէ խրախուսիչ ու զնահատական նամակներ կը ստանայ: Մեր համայնքին մէջ եւս ամէն ծխական կը յայտնէ միեւնոյն զգացումը եւ անհամբեր կը սպասէ թերթին շաբաթօրեայ թիւը:

Ը.- ՀԻԻԱՆԴԱՅ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Տարուան ընթացքին այցելած ենք 150 հիւանդի: Հիւանդանոցներէն ոմանք շատ հեռուները գտնուելուն խլած են մեզմէ շատ ժամա- նակ: Պէտք է յիշատակել նաեւ թէ շատ անգամներ հիւանդներու կանչուած ենք կէս գիշերուան եւ առաւօտեան միջեւ: Յայտնելով այս բոլորը, տակաւին դժգոհու- թիւն ունինք բոլոր անոնց հանդէպ որոնք կը հիւանդանան, հիւանդանոց կը պառկին մեզի իմաց չեն տար, եւ առողջանալէ յետոյ մեզ կը մեղադրեն թէ չենք այցելած: Հիւանդութեան պարագային ինչպէս բժիշկ կանչելու պարտականութիւնը ընտանիքին կը պատկանի, Հովիւին իմաց տալու պարտականութիւնը եւս ընտանիքին կը պատկանի:

Թ.- ՄԻԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Տարուան ընթացքին տուած ենք նաեւ 190 ծխական այցելութիւն ի միխթարութիւն մեր բարեպաշտ ժողովրդեան եւ յորդորած ենք որ կանոնաւոր կերպով եկեղեցի յաճախեն եւ իրենց փոքրիկները հայ եւ կիրակնօրեայ դպրոցներ դրկեն:

Ժ.- ՀԱՅ ԽՆԱՄԱՏՈՒՆ.- Մեր ամսօրեայ հերթական այցելութիւնները տուած ենք Պոստոնի Հայ Խնամատան, ամէն անգամիք ալ քարոզած ենք: Ամէն Մնունդին եւ Զատկին յաշորդ առտու կանուխ գացած եւ բոլորը հաղորդած ենք:

ԺԱ.- ՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.- Տարուան ընթացքին նախագահած ենք Միական Խոր- հուրդի հերթական բոլոր ժողովներուն եւ մեզի ինկած բաժինով մասնակցած ենք խորհրդակցութեանց ու գործակցութեանց: Դժբախտութիւնը ունեցած ենք այս ժո- ղովներէն միոյն մէջ անակնկալ ու յանկարծական մահուան առջեւ գտնուիլ մեր հոգաբարձութեան նախկին երկարամեայ ատենապետ եւ երեսփոխան Հմայեակ Հապէշ- եանի, որ իր հոգին աւանդեց պարտականութեան ճամբուն վրայ:

ԺԲ.- ԴՊՐԱՅ ԴԱՍ.- Դպրաց Դասի անդամ-անդամուհիները կարելի կանոնաւո- րութեամբ եկեղեցի եկան եւ վարպետ խմբավար Պ. Համբարձում Պէրպէրեանի ղեկա- վարութեամբ ու գեղեցիկ երգեցողութեամբ պայծառացուցին Ս. Պատարագը եւ խոր- հուրդին իմաստը դրոշմեցին բոլոր հաւատացեալներու հոգիներուն: Իսկ սարկա- ւազները նմանապէս իրենց կանոնաւոր ծառայութեամբ ժամերգութեան բաժինը կատա- րեցին եւ սպասարկեցին Ս. Պատարագի ընթացքին Ս. Սեղանին: Բոլորին կը յայտ- նենք մեր զնահատանքը:

ՁԳ.- ԵՆԹԱՍԱՐՄԻՆՆԵՐ.- Ենթամարմիններու շարքին մէջ կը գտնուին մեր Տիկնանց Միութիւնները, Արանց եւ Երիտասարդաց կազմակերպութիւնները: Ուրախալի է որ բոլորին ալ անդամներու թիւը տարուէ տարի կ'աճի: Ասոնց եւս բերած ենք մեր համագործակցութիւնները, թելադրութիւնները եւ օգտակարութիւնները մեզի վերաբերեալ հարցերու շուրջ: Իսկ չենք միջամտած իրենց նիւթական եւ ընկերային գործունէութեանց: Յառաջիկային կը ծրագրենք Սաութ Կորի մէջ եւս Տիկնանց Միութիւն մը կազմակերպել: Այս մասին արդէն խորհրդակցած ենք զանազան քաղաքներու տիկիներուն հետ:

ՁԵ.- ԴՊՐՈՑՆԵՐ.- Ունինք երկու տեսակ դպրոց: Լեզուի եւ կրօնի: Առաջինին համար ունինք երեք ճիւղեր, որոնց վարիչներուն հետ յաճախ հաղորդակցութեան մէջ գտնուած ենք եւ պատեհութիւն ունեցած ատեննիս ալ այցելած ենք դպրոցները ու քաջալերած՝ աշակերտութիւնը, ուսուցչութիւնը եւ խնամակալութիւնը: Յաւի սիրտ կը յայտնենք թէ մեր երիտասարդ ծնողներու բացարձակ մեծամասնութիւնը անտարբեր է նոր սերունդի հայեցի հաստիարակութեան հանդէպ: Պէտք է մտահան ընել թէ հայութեան հիմը հայ լեզուն է, եւ հացի չափ հարկաւոր է ան ցեղին պահպանութեան համար:

Իսկ երկրորդը մեր Կիրակնօրեայ դպրոցն է, որ հակառակ Հայ Դպրոցի տկարութեան, ասիկա կ'աճի ու կը զօրանայ: Արձանագրուած աշակերտութեան թիւը բարձրացած է 430-ի: Բայց դժբախտաբար ամէնը ամէն կիրակի չեն գար: Յարգելի ծնողներէն կը խնդրուի որ քիչ մը եւս զոհողութիւն ընեն իրենց զաւակներուն համար եւ կանոնաւոր կերպով ամէն կիրակի դպրոց բերեն զանոնք, որպէս զի անոնք հետագային դառնան տիպար ամերիկահայ քիստոնեաներ: Շատ կը ցաւինք որ դպրոցը տեղի կ'ունենայ պատարագի ընթացքին եւ մենք պատեհութիւն չունինք անձամբ այցելելու զայն: Բայց յարգելի տեսուչ Պ. ձան Արոյեան մեզի հետ միշտ կը խորհրդակցի կրօնական եւ կրթական հարցերու առնչութեամբ:

ՁԶ.- ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ.- Միակն խորհուրդի որոշումով ու կարգադրութեամբ փոփոխութեան ենթարկուեցաւ եկեղեցւոյ զբասենեակի քարտուղարութիւնը: Նուրջ վեց տարի պաշտօնավարեց Պ. Գարեգին Պօղոսեան մեզ գոհ թողլով իր բարւոք ծառայութեամբ: Ներկայ քարտուղարն է Պ. Ժիրայր Սալիպեան, որ կը զբաղի նաեւ Միակն խորհուրդի հաշուական տոմարով, եւ իրեն յանձնուած գործերը կը կատարէ մեր գիտութեամբ:

ՁԷ.- ԼՈՒՍԱՐԱՐ ԵՎ ԺԱՄԿՈԶ.- Լուսարար Պետրոս Առաքելեան ամէն առտու կը զբաղի զբասենեակներու մաքրութեամբ եւ ապա եկեղեցւոյ մաքրութեամբ, այս վերջինը նախանձելի վիճակի մը մէջ պահելով: Իսկ Ժամկոչ Կարպիս Գրբալեան սրահներու մաքրութեան գործէն զատ Առաքելեանի բացակայութեան մեզի կ'օգնէ միմիակրանի եւ ծալլելիք մեքենայի վրայ, իսկ Տաճարի առաքման պահանջ միասնաբար կը կատարէ այդ գործը, որոնց կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

ՁԸ.- ԱՐՏԱԲՈՅ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.- Մեր եկեղեցւոյ ու մեր ծովին սահմանէն դուրս եւս յաճախ տարած ենք մեր ծառայութիւնը թաղմանական արարողութիւններուն մասնակցելով քոյր եկեղեցիներու մէջ: Խօսած ենք բազմաթիւ ճաշկերոյթներու մէջ եւ այցելած ենք հեռուներէն եկող հիւանդներու:

Կը խորհինք թէ այս ամփոփ արտայայտութեամբ կրցանք մեր յարգելի ծխականներուն պատկերացնել Հոգեւոր Հովիւի տարուան մը գիշերուան ու ցերեկուան, անդուլ ու անդադար գործունէութիւնը: Այս բոլորը ըրինք մէն բանէ տարուած, սըրբազան գործին հանդէպ մեր ունեցած անհուն սէրէն եւ անոր հանդէպ մեր ըրած ուխտէն:

Այս առթիւ իմ սրտագին շնորհակալութիւններս ու զնահատութիւններս կը յայտնեմ մեր բոլոր կազմակերպութեանց եւ այն ազնիւ հոգիներուն՝ որոնք քշակցեցան մեզի եւ դիւրացուցին մեր գործունէութիւնը:

ԲԱՐԳԷՆ Ա. ԲՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
Հոգեւոր Հովիւ
Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ